

Մարտ 9, 1972

Արժանաշնորհ  
Տ. Մամիկոն Քնյա. Ասկանեան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Մօնթրթալ.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազն Հայրը ստացած է Մարտ 3 թուակիր 2եր նամակը,  
որով կը հաղորդէք թէ 2եր նախազանութեամբ գումարուած ծխալան ժո-  
ղովին մէջ ընտրոթիւն կատարուած է ծխական ժողովի 2որս անադմոց  
համար։ Նախապէս ստացուած էր ծխական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը։

Խորին Սրբազնութիւնը կը յանձնարարէ որ ֆութով Առաջնորդարան  
ղրկէք հետեւեալ նիւթերը, որպէս զի վաւերացնէ 2եր նորընտիր ան-  
դամները։

1. Ընտրուած անձերուն ստացած քոռւէները
2. Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագրի ֆօրմը, որմէ օրի-  
նակ մը եւս կը ներփակեմ
3. 1971 տարեշրջանի ելեւմտից լրիւ հաշուեկշիռը։

Հաճեցէք ընթացք տալ Առաջնորդ Սրբազն Հօր սոյն հրահանգին։

Խորին յարզանօք

Սուրէն Մանուէլեան  
Դիւանապետ